Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Հոդված 1-ին 1-ին պարբերություն	(…) 2017 թվականի դեկտեմբերի 16-ին ուժի մեջ է մտել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ուժը կորցրած է ճանաչվել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև խնդրի ամբողջական կարգավորման նպատակով առաջարկում ենք «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածից հանել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
Հեղինակ	Օրենքի նախագծի վերնագիր	Վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով, քանի որ կառավարության առաջարկի ընդունմամբ՝ օրենքում կատարվում է ոչ թե մեկ, այլ մեկից ավելի փոփոխություն:	Ընդունվել է	Ընդունվել է
Հեղինակ	Հոդված 1-ին 1-ին պարբերություն	«2018 թվականի դեկտեմբերի 31-ն» բառերը փոխարինել «2019 թվականի մարտի 1-ն» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է